

ԱՐՑԱԽ - ՀԱՅԱՍՏԱՆ

Օգոստոս 12-ին մեր առած լուրերու համաձայն, Ղարաբաղ մարտեր չկային 24 ժամ է, գլխավորաբար տեղատարափ անձրեւներուն պատճառաւ: Հայաստանեան սահմանամերձ շրջանները ուժեղացած ձյունները վրէ շարունակուին: Աղբիւրները յարձակած են Կարմիրի վրայ, երկու հրատարակչով եւ երկու պահակառօքով, Հայերը երկու մեռեալ եւ չորս վիրաւոր ունեցած են: Նման յարձակումներու հետեւանքով երկու մեռեալ եւ երեք վիրաւոր ալ ճառուչ, յարձակում գործուած է նաեւ Վարդենիսի վրայ գրադներով եւ քանդուած է շրջկեդրոնի շէնքը:

Նախապէս ալ Օգոստոս 10-ի դիշերը հրետանիով եւ «զրազ» կայաններէ ուժեղացած է Կրասնոսելսկի շրջանային կեդրոնը, սահմանամերձ շարք մը բնակավայրեր ինչպէս նաեւ Գորիսի Կոռնիձոր գիւղը: Կրասնոսելսկի շրջանի սահմանին վրայ մարտեր տեղի ունեցած են որոնց ընթացքին թշնամին աւելի քան 30 զոհ տուած է: Հայկական կողմէն կայ մէկ զոհ եւ վեց վիրաւոր:

Ֆիզուլիի շրջանէն ալ կրակ բացուած է Մարտունիի Կարմիր շուկայ աւանը ուր զգալի աւերներ կան:

Շուշի -- Լաչին ճամբուն Չարիսլուի հատուածին նորոգութեան աշխատանքը աւարտելէ ետք Ստեփանակերտ ելեկտրակայանութիւն ստացած է, թէեւ կան սուանձին թաղամասեր որոնք տակաւին հոսանք չունին: Պատերազմը, անընդմէջ ուժեղացածները վրէ խոչընդոտեն, սա-

կայն մոռացութեան չեն մասներ արտադրական եւ ընկերային խնդիրները: Նորոգուած է եւ լրիւ տարողութեամբ սկսած է գործել Ստեփանակերտի մետաքսի գործարանը:

Ստեփանակերտ ապաստանած զաղթականներու վիճակը քիչ մը թեթեւցնելու համար քաղաքային խորհուրդը սկսած է անոնց յանձնել 6 ամիսէն աւելի ժամանակով Ստեփանակերտը լքած քաղաքացիներու բնակարանները:

Մարտակերտի Մէհմանա յունարեակ գիւղէն տասնեակ ընտանիքներ արտասահմանէն քաղաքակրօն ապաստան խնդրած են: Ղարաբաղի իշխանութիւններուն, Մոսկուայի յունարեակ գեոպանատան ուղղուած դիմումին մէջ ըսուած է որ միջազգային հանրութիւնը տակաւին անտարբեր կը մնայ իր անկախութեան համար մարտնչող Ղարաբաղի հանրապետութեան դէմ ադրբեջանական յարձակումներուն նկատմամբ: Այդ քաղաքակրօնութիւնը յանդեցուցած է ինչպէս հայ բրնձակչութեան, այնպէս ալ ուրիշ եւ յոյն փոքրամասնութիւններուն բնօր տեղահանութեան:

Հետաքրքրական է նշել որ «Լը Մոնտ» (Օգոստոս 12) իր կարճ լրատուութեան մէջ, ուր կ'արձագանգէր Ադրբեջանի «արդարացման» Արծուաչէնի գրաւման համար, կ'աւելցնէր նաեւ «Էօզկիւր - Կիւնտէմ»-ի ընդը ինչ կը վերաբերի Աղբիւրներու մարդուամին Սարըղամըշ եւ զոր թարգմանարար, մանրամասնօրէն տրուած է ինք մեր նախորդ թիւով: Թերթը կ'ըսէր նաեւ թէ «Թուրք բանակի սպայակոյտը Երկուշարթի իրիկուն չէր հերքած այդ լուրը», ինչ որ շատ կարեւոր հաստատում մըն է: